«Աֆղանական սոցիալիզմի» խորհրդային մոդելը. հայեցակարգ, իրականացում և ձախողման պատճառներ

Պողոսյան Վլադիմիր Ա.
Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս,
Համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ,
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ (Իջևան, ՀՀ)
https://orcid.org/0009-0001-9581-6453
vladimir.pogosyan@ysu.am

ՀՏԴ՝ 930, 94(4/9); **EDN:** BSABYF
DOI: 10.58587/18292437-2026.5-35
Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ «աֆղանական սոցիալիզմ», խորհրդային արտաքին քաղաքականություն, ազգա-պետականաշինություն, Երրորդ աշխարհի երկրներ, խորհրդային մոդել, ինստիտուցիոնալ վերափոխում

Советская модель «афганского социализма»: концепция, реализация и причины провала

Погосян Владимир А.
преподаватель кафедры армянской истории и обществознания,
доцент кафедры всемирной истории,
Иджеванский филиал ЕГУ (Иджеван, РА)

Аннотация. В статье акцентируется внимание на советских проектах национально-государственного строительства, реализованных в странах Третьего мира, - как в контексте идеологического влияния, так и в контексте формирования новой модели геополитического воздействия. В качестве примера рассматривается модель «экспорта» советской внешней политики или построения «афганского социализма», где советская сторона попыталась сформировать систему влияния, основанную не только на идеологическом воздействии, но и на устойчивых экономических, технологических, культурных и научно-образовательных отношениях с целью преобразования афганского общества путём внедрения социалистических ценностей.
Цель статьи - изучить особенности советского опыта «афганского социализма», сравнив факторы успеха и неудачи советских проектов с политикой, реализованной в других странах Третьего мира. Теоретической основой работы является модель «источников власти национального государства» М. Манна, с помощью которой рассматриваются основные направления провала советского влияния на афганском направлении.
Научная новизна исследования заключается в том, что предпринята попытка посредством теоретического и сравнительного анализа рассмотреть опыт «афганского социализма», выявив факторы успеха и неудачи советских проектов национально-государственного строительства.
Результаты показывают, что советский афганский проект потерпел неудачу по всем четырём направлениям - идеологическому, политическому, экономическому и военному, что свидетельствует о том, что советская сторона не имела чёткой стратегии и действовала в оперативном режиме, зачастую не учитывая внутренние закономерности развития афганского общества, его религиозные и культурные особенности.
Ключевые слова и словосочетания: «афганский социализм», советская внешняя политика, национально-государственное строительство, страны Третьего мира, советская модель, институциональная трансформация

The Soviet Model of "Afghan Socialism": Concept, Implementation, and Causes of Failure

Poghosyan Vladimir A.
Lecturer at the Department of Armenian History and Social Science,
Associate Professor at the Department of World History,
YSU Ijevan Branch (Ijevan, RA)

Abstract. The article highlights the Soviet nation-building projects implemented in Third World countries, both in the context of ideological influence and in the context of forming a new model of geopolitical impact. As an example, the model of the "export" of Soviet foreign policy, or the construction of "Afghan socialism," is examined, where the Soviet side attempted to form a system of influence based not only on ideological pressure but also on stable economic, technological, cultural, and scientific-educational relations, with the aim of transforming Afghan society through the introduction of socialist values.
The purpose of the article is to study the peculiarities of the Soviet experience of "Afghan socialism" by comparing the factors of success and failure of Soviet projects with the policies implemented in other Third World countries. The

theoretical basis of the work is M. Mann's model of the "sources of power of the national state," through which the main directions of the failure of Soviet influence in the Afghan sphere are examined.
The scientific novelty of the study lies in the fact that an attempt has been made, through theoretical and comparative analysis, to examine the experience of "Afghan socialism," identifying the factors of success and failure of Soviet nation-building projects.
The results show that the Soviet Afghan project failed in all four directions — ideological, political, economic, and military — which indicates that the Soviet side lacked a clear strategy and acted in an operational manner, often without taking into account the internal patterns of development of Afghan society, its religious and cultural characteristics.
Keywords & phrases: "Afghan socialism," Soviet foreign policy, nation-building, Third World countries, Soviet model, institutional transformation

Ներածություն

Խորհրդային արտաքին քաղաքականության իրացման ներքին և արտաքին շարժառիթները, գաղափարախոսական և մշակութային առանձնահատկությունները հստակեցնելու և մոդելավորելու տեսանկյունից բավական է այն դիտարկել խորհրդային ազդեցության ծիրից դուրս կամ ինչպես ընդունված էր «երրորդ աշխարհի» երկրներից որևէ մեկի, այս պարագայում Աֆղանստանի օրինակով, ինչը հնարավորություն կտա առանձին դիտարկելու տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական ազդեցության ձևավորումը և առկա ռիսկերի գնահատման կամ կանխատեսելիության շուրջ խորհրդային ղեկավարության դրսևորած մակերեսայնությունը:

Միևնույն ժամանակ, խորհրդային արտաքին քաղաքականության աֆղանական ուղղությունը հետազոտողի համար բացում է խորհրդային քաղաքականության բազմաշերտության, հաճախ պարզընկալության դրսևորումները, որոնք նորագույն ժամանակների բազմաչափ մարտահրավերներին պատասխանելու տեսանկյունից չէին ընձեռում գործիքակազմեր և գործողությունների հստակ ռազմավարություն: Այս գործելակերպը կարելի է բնորոշել որպես օպերատիվ նշանակության՝ խնդիրի առաջացում – լուծում ձևաչափով:

Հետազոտության նպատակն է համակարգված ուսումնասիրել «աֆղանական սոցիալիզմի» խորհրդային փորձառության առանձնահատկությունները՝ համեմատական անցկացնելով Երրորդ աշխարհի երկրներում իրականացված քաղաքականության հետ և բացահայտելով խորհրդային նախագծերի հաջողության և ձախողման գործոնները: Այս նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել խորհրդային արտաքին քաղաքականության «արտահանման» աֆղանական մոդելի փորձառության առանձնահատկությունները,
- Համեմատել խորհրդային արտաքին քաղաքականության ձևաչափերն ու ոլորտայնությունը Աֆղանստանում և Երրորդ աշխարհի երկրներում,
- Բացահայտել խորհրդային ազգա-պետականաշինական նախագծերը արդյունավետությունը՝ համաձայն Մ. Մաննի «ազգային պետության իշխանության աղբյուրների» հայեցակարգի:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ փորձել ենք վերլուծել «աֆղանական սոցիալիզմի» խորհրդային փորձառությունը և համեմատել Երրորդ աշխարհի երկրների համանման փորձառության հետ՝ բացահայտելով խորհրդային ազգա-պետականաշինության նախագծերի հաջողության և ձախողման գործոնները:

Խորհրդային արտաքին քաղաքականության հայեցակարգերը եվ ազգա-պետականաշինական նախագծերը (1920-1950-ական թվականներ)

Խորհրդային Միության արտաքին քաղաքականության հիմքում, դեռևս 1920-ական թվականներից որպես առաջնահերթություն դիտարկվում էր «համաշխարհային սոցիալիստական հեղափոխության տարածումը»[1] [**11**; **6**, էջեր 381-394] ու կապիտալիստական պետություններին հակադրությունը, որը չէր կարող սահմանափակվել միայն ԽՍՀՄ-ով, այլ պարտավոր էր առաջացնել սոցիալիզմի հզոր շարժում», իսկ վերջնարդյունքում հանգեցներ «համաշխարհային հեղափոխության հաղթանակին»: Այս ելակետից ԽՍՀՄ-ը թիրախավորում էր կապիտալիստական աշխարհի երկրներին՝ իրեն դիտարկելով որպես համաշխարհային կոմունիզմի «ոգեշնչող» [**5**]: Ինչպես նկատելի է՝ արտաքին քաղաքականության հիմքում որպես առաջնային գաղափարախոսական նպատակ դրված էր աշխարհի կոմունիզացիան և այդ նպատակին հասնելու ռազմավարական միջոցը՝ պրոլետարիատի դիկտատուրան [**2,** էջ 27]: «Համաշխարհային պրոլետարիատի հաղթանակին» հասնելու ռազմավարական քայլերի կամ հայեցակարգերի տեսանկյունից Խորհրդային Միությունը չունեցավ արտաքին քաղաքական ռազմավարության հայեցակարգային մոդել և յուրաքանչյուր նոր առաջխաղացում կամ հարկադիր նահանջ, ինչպես նկատում են հետազոտողները [**15,** էջ 3], փոփոխում կամ օպերատիվ իրավիճակային վե-

[1] Այս մոտեցումը ինստիտուցիոնալ կազմակերպական ձև ստացավ «Կոմինտերն»-ի միջոցով:

րակառուցման էր ենթարկում նախորդ հայեցակարգային քայլերը՝ «էվոլյոցիոն, խաղաղ» հեղափոխություններից մինչև Կարմիր բանակի կողմից «ազատագրման»:

Որպես համաշխարհային տիրապետության և հաղթանակի ապահովման ռազմավարական նպատակ՝ դիտարկելի է խորհրդային ազդեցության ծիրի անվերապահ անվտանգությունը, որը թույլ կտար իրագործել խորհրդային գաղափարախոսական նպատակները: Ըստ աշխարհաքաղաքական և համաշխարհային տնտեսական զարգացումների՝ խորհրդային ընտրանու առջև ծառանում էր խնդիր՝ մշակել առկա մարտահրավերներին և ռիսկերին համարժեք մարտավարական գործողությունները՝ շատ հաճախ վերանայելով ավանդական մոտեցումներն ու ձևաչափերը, ինչպես նաև այն հարմարեցնելով անընդհատ փոփոխվող սոցիալական և քաղաքական իրավիճակներին [**18**, էջեր 75-76]: Խորհրդային արտաքին քաղաքականության մարտավարությունը՝ հատկապես Կոմինտերնի գաղափարական և գործնական «անկարողության», աշխարհամարտում ունեցած հաջողություններից և ազդեցության գոտու ընդլայնումից հետո ենթարկվեց որոշակի փոխակերպումների, որոնց ազդեցությամբ էլ խորհրդային վարչակարգը փորձում էր «հետևել տարբեր պետությունների միջև խաղաղ համակեցության քաղաքականությանը՝ անկախ նրանց սոցիալական կարգից»: Արտաքին քաղաքական հարաբերությունների ձևավորման մարտավարական փոխակերպումը պահանջում էր տնտեսական և մշակութային ակտիվ հարաբերությունների հաստատում՝ վերջնարդյունքում ամրապնդելով քաղաքական ազդեցության գործիքներն ու միջոցները:

Խորհրդային արտաքին քաղաքական մարտավարության գործառութային հիմքերի ամրապնդման տեսանկյունից աշխարհի երկրները բաժանվեցին երեք խմբերի՝ «եղբայրական ժողովուրդների» երկրներ, երկրներ, որոնք «հրաժարվում են ներգրավվել ռազմական բլոկներում» և «ռազմական բլոկի» երկրներ[2] [**1,** էջ 41]: Խորհրդային արտաքին քաղաքականության այս եռաչափ համագործակցային մոդելը նախատեսում էր տնտեսական և քաղաքական ներգործության տարբեր մոտեցումների և հնարավորությունների տրամադրում: Սկսած 1950-ական թվականներից խորհրդային արտաքին քաղաքականության մարտավարական ուղղություններից կարևորվեց «չեզոք» կամ «խաղաղությունը պահպանել ձգտող բոլոր ուժերի հետ» համագործակցությունը, որոնց հետ անհրաժեշտ էր ընդլայնել համագործակցության մակարդակն ու բարեկամությունը: Այդ երկրների շարքին էին դասվում Հնդկաստանը, Բիրման, Աֆղանստանը, Եգիպտոսը, Սիրիան, որոնց տնտեսական և քաղաքական համակարգերի նկատմամբ խորհրդային հետաքրքրությունները պայմանավորում էին նաև տարածաշրջաններում խորհրդային սոցիալիզմի արտահմանման և տեղերում պրոյեկտման ցանկությամբ [**18**, էջ 79]:

Իր արտաքին քաղաքականության իրացման ճանապարհին խորհրդային ղեկավարությունն առաջնորդվում էր տարաբնույթ տնտեսական և մշակութային ծրագրերի և ներդրումների կատարմամբ, որոնք դիտարկվում էին որպես ազդեցության գեներացման միջոց: Արտաքին քաղաքականության մեջ իրականության ու խորհրդային գաղափարախոսության միջև առկա անջրպետը որոշակիորեն խոչընդոտում էր խորհրդային վարչակարգի ճկուն քաղաքականությանը, որը պահպանում էր «կոմունիստական առասպելի» էությունը՝ միաժամանակ հաշվի առնելով հնարավոր մարտահրավերներն ու անկանխատեսելի զարգացումները [**15**, էջ 4]: Միաժամանակ նկատելի էր ներքին և արտաքին մարտահրավերներին պատասխանելու խորհրդային արտաքին քաղաքականության սահմանափակությունը, որը ձգտում էր ընդլայնելու խորհրդային ճամբարը և խորհրդային ծիրին «միավորելու» ասիական նորանկախ պետություններ:

ԽՍՀՄ, ինչպես նաև նրան հակադրվող բևեռի ներկայացուցիչները, Երրորդ աշխարհի երկրների քաղաքական, տնտեսական և հասարակական հնարավորությունները դիտարկում էին որպես միջոց՝ իրենց աշխարհաքաղաքական մարտավարության և ռազմավարությունների

[2] ԽՄԿԿ 20-րդ համագումարում հստակ ամրագրվում էր խորհրդային արտաքին քաղաքականության ուղենիշները՝ «Որո՞նք են կուսակցության ապագա խնդիրները արտաքին քաղաքականության մեջ:

1. Անսասանորեն հետապնդել տարբեր պետությունների միջև խաղաղ համակեցության լենինյան քաղաքականությունը՝ անկախ նրանց սոցիալական համակարգերից: Ակտիվորեն ձգտել ժողովուրդների միջև խաղաղության և անվտանգության, պետությունների միջև վստահության հաստատման և ձգտել միջազգային լարվածության ձեռքբերված մեղմացմանը վերածել երկարատև խաղաղության:

2. Ամեն կերպ ամրապնդել եղբայրական հարաբերությունները Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Ալբանիայի, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության, Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության, Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության և Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության հետ՝ հիշելով, որ որքան միասնական և հզոր են սոցիալիստական երկրները, այնքան ավելի հուսալի է խաղաղության գործը:

3. Մշտապես ամրապնդել բարեկամության և համագործակցության կապերը Հնդկաստանի Հանրապետության, Բիրմայի, Ինդոնեզիայի, Աֆղանստանի, Եգիպտոսի, Սիրիայի և այլ պետությունների հետ, որոնք հավատարիմ են խաղաղության դիրքորոշմանը, աջակցել այն երկրներին, որոնք թույլ չեն տալիս իրենց ներքաշվել ռազմական դաշինքների մեջ. հարմարվել խաղաղության պահպանմամբ հետաքրքրված բոլոր ուժերին:

իրականացման ճանապարհին և բանաձևում էին տարաբնույթ ազդեցության նախագծեր, որոնց հիմքում ընկած էր սեփական շահերի և առաջնահերթությունների սպասարկումը: Երրորդ աշխարհի երկրների քաղաքական և հասարակական կարգը բարելավելու նախագծերը, որոնք մշակված և առաջարկված էին աշխարհաքաղաքական կենտրոնների կողմից չէին կարող առաջնահերթություն տալ երրորդ աշխարհի որևէ երկրի պահանջներին ու ցանկություններին, հետևաբար, արտահայտում էին սեփական շահերն ու տեսակետները: Ինչպես նկատում են հետազոտական գրականության մեջ, այս ազգ-պետություն կառուցելու նախագծերն ինքնանպատակ չէին, իսկ օտարերկրյա զինված ուժերը միայն միջոց էին աշխարհաքաղաքական կենտրոնների խնդիրների լուծման և ռազմավարական օրակարգերի սպասարկման համար [**13**, էջեր 162-175]:

Ստալինյան ժամանակաշրջանին հաջորդող ժամանակաշրջանում խորհրդային արտաքին քաղաքականությունը կրեց նոր ղեկավարության և միջազգային զարգացումների ուղիղ ազդեցությունը, որի արդյունքում խորհրդային արտաքին քաղաքականության հայեցակարգային մոտեցումները կրեցին որոշակի փոփոխությունները: Որպես երկարատև խաղաղ համակեցության քաղաքականության կողմնակիցներ՝ խորհրդային ղեկավարությունը դիտարկում էր ակտիվ և բազմավեկտոր քաղաքականությունը, որը ներառում էր Երրորդ աշխարհի երկրներում ազգային-ազատագրական պատերազմների աջակցությունը, արևմտյան աշխարհի ներսում «հակասությունների» օգտագործումը և Արևմուտքին տնտեսագիտության և տեխնոլոգիայի ոլորտում առաջ անցնելու ջանքերը [**15**, էջ 5]:

Երրորդ աշխարհի երկրներում ազգային պետականաշինության խորհրդային նախագծերը տարբերվում էին իրենց կառուցվածքային բարդությամբ և Մ. Մաննի ազգային պետության իշխանության աղբյուրների տեսական մոդելի համաձայն պարառում էին չորս հիմնական չափանիշներ [**8**, էջեր 22-28]՝ սոցիալիստական աշխարհայացքի ձևավորում (կրթության և մշակութային քաղաքականության միջոցով), տեխնոլոգիական արդիականացում (պետական ապարատի ամրապնդում, ազգային տնտեսության կենտրոնացում և պլանավորում), անվտանգային և ռազմական ինստիտուտների ձևավորում, քաղաքական համակարգի կայացում (սոցիալական խմբերի շահերը ներկայացնող ազգային կառավարություն և քաղաքական գործընթացները ղեկավարելու ունակ ժողովրդավարական կուսակցության կայացում):

«Աֆղանական սոցիալիզմի» փորձառությունը և դրա արդյունքները

Ինչ վերաբերում է խորհրդային աֆղանական քաղաքականությանը, ապա սկսած 1920-ական թվականներից այս ուղղությամբ կատարվել էին որոշակի քայլեր: Այդ քայլերի շարքին կարելի էի դասել Աֆղանստանում հակաբրիտանական գործընթացների և ապստամբական ուժերի դեպի Հնդկաստան արտահանման Կոմինտերնի ծրագրերը [**6**, էջեր 381-394], տնտեսական և տեխնոլոգիական միջոցների տրամադրումն ու խորհրդային հասարակական մոդելի պրոյեկցիայի փորձերը: Խորհրդային տնտեսական և տեխնիկական օգնությունը նպատակ ուներ Աֆղանստանում ստեղծել խորհրդայինին համարժեք ինստիտուտներ և ինստիտուցիոնալացնել ներկայությունն ու աֆղանական հասարակության կախվածությունը [**17**, էջ 600]: Խորհրդա-աֆղանական հարաբերությունների առաջին քառասնամյա փուլում խորհրդային կողմը նախաձեռնել է բազմաթիվ ծրագրերը և նախագծեր, որոնց կեսից ավելին հաջողվեց ավարտին հասցնել[3] [**4**, էջեր 168-173]: Տնտեսական և մասնագիտական նկատելի ներդրումների իրականացումը և դրա ազդեցությունը գնահատելու գիտական փորձերն, ըստ էության ստվերվեցին պատերազմի անարդյունավետությամբ, որն էլ փորձագիտական եզրակացությունների գնահատմամբ «*մեծ մասամբ անտեսվում է վերլուծաբանների կողմից և հազվադեպ է քննարկվում առկա գրականության մեջ*» [**12**]: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ խորհրդային աֆղանական քաղաքականության առաջին քայլերը՝ տնտեսական արդիականացման փորձառությունը, գիտական գրականության մեջ դիտարկվում է ծայրահեղ անկողմնակալության ելակետից մինչև ուղիղ միջամտության գործոն: Հատկապես արևմտյան հետազոտական մտքում գերակայում է աֆղանական տնտեսությունը խորհրդայինին ինտեգրելու գաղափարը, ինչը վերջնարդյունքում հանգեցնելու էր քաղաքական կախվածության և ֆորպոստային կարգավիճակի ստանձմանը [**14**, էջեր 71-95; **16**, էջեր 37-69]:

Խորհրդային մոտեցման հիմքում ընկած էր այն համոզմունքը, որ զարգացող կամ Երրորդ աշխարհի երկրները, այդ թվում՝ Աֆղանստանը, ունեն բավարար ներքին ռեսուրսներ տնտեսական զարգացման համար, սակայն այդ ռեսուրսները «կաշկանդված» են կապիտալիստական աշխատանքի բաժանման, ավանդական

[3] Դրանց թվում էին ճանապարհներ, էլեկտրակայաններ և էլեկտրահաղորդման գծեր, ոռոգման ջրանցքներ, գործարաններ, բնակարաններ, հացահատիկի վերելակներ, հացաբուլկեղենի գործարաններ, ավտոմեքենաների վերանորոգման գործարաններ, օդանավակայաններ, կրթական հաստատություններ և այլն:

սոցիալական կառուցվածքների և հետադիմական ինստիտուտների գործունեության պատճառով: Այս տեսանկյունից տնտեսական հետամնացությունը պայմանավորված էր ոչ թե ռեսուրսների սակավությամբ, այլ դրանց ոչ արդյունավետ բաշխմամբ և օգտագործմամբ: Հետևաբար, առաջնային խնդիր էր ոչ միայն տնտեսական օգնությունը, այլև այդ երկրների սոցիալական և ինստիտուցիոնալ վերափոխումը, որը պետք է ազատեր այդ ռեսուրսները և դրանք ուղղեր արդյունաբերականացման և արդիականացման ուղղությամբ:

Այս մոտեցումը վկայում է, որ խորհրդային քաղաքական մտածողությունը վաղ փուլում արդեն ընդգծում էր ինստիտուտների նշանակությունը, թեև այլ տերմինաբանությամբ, քան արևմտյան տեսությունները: Սակայն գործնականում ԽՍՀՄ-ը չկարողացավ ստեղծել այնպիսի ինստիտուցիոնալ համակարգեր, որոնք կլինեին ավելի արդյունավետ, քան այն ավանդական կառույցները, որոնք փոխարինվում էին:

Աֆղանստանում խորհրդային ազգա-պետականաշինական նախագիծը, ինչպես պնդում են ուսումնասիրողները, եզակի դեպք չէր, այլ գլոբալ նախագծի հատուկ օրինակ՝ տնտեսապես հետամնաց Երրորդ աշխարհի երկրներում սոցիալիստական զարգացման ուղի ձևավորելու համար [**13**, էջեր 162-175]: Նմանատիպ երկրների օրինակներն (Իրաք, Սիրիա, Մոնղոլիա, Եմեն և այլն) ու նրանց դրսևորած ակտիվությունը խորհրդային նախագծերի նկատմամբ, ըստ էության տարբերվում էին իրենց մշակութային և պատմական զարգացման փուլերի, պետական և քաղաքական համակարգերի առանձնահատկություններով [**13**, էջ 168]: Այս բոլոր երկրներն ու նրանց հասարակությունները ունեին որոշակի նմանություններ և առանձնահատկություններ, որոնց գերակայությամբ էլ խորհրդային արտաքին քաղաքականության համար դարձել էին յուրատեսակ աշխատարաններ: Այս երկրների սոցիալական ներքին կառուցակարգերը գյուղատնտեսական էին՝ «*տեխնոլոգիական զարգացման և աշխատանքի արտադրողականության ցածր մակարդակով, որտեղ քաղաքական հարաբերությունները հիմնված էին կլանային, ցեղային և հովանավորչական-հաճախորդական հարաբերությունների վրա՝ օրենքի և բարոյականության հնացած ձևերով, իսկ իշխանության և պատասխանատվության համակարգը՝ պատրիարխալ ընտանեկան հիմքերի վրա*» [**13,** էջ 168]:

Աֆղանական ընտրանում տեսանկյունից խորհրդային աջակցությունը և տնտեսական-քաղաքական մոդելի ներդրումը ավելի հավանական և օգտավետ էր թվում, քանի որ և՛ լոգիստիկ, և՛ մշակութային առումով խորհրդային միջավայրն ավելի նախընտրելի և հասանելի էր: Հատկապես Մուհամմադ Դաուդի կառավարությունը փորձեց խորհրդային պլանավորման, տնտեսվարման փորձառությունը կիրարկելի դարձնել աֆղանականի նկատմամբ: Կիրառական դարձան տնտեսության պլանավորման, տեխնիկական և տեխնոլոգիական հաստատությունների հիմնադրման խորհրդային մոդելներն ու պրակտիկան:

Աֆղանստանում խորհրդային կողմի իրականացրած մեծամասշտաբ ֆինանսական և տեխնոլոգիական ներդրումները ոչ միայն նպատակ ունեին պրոյեկտելու խորհրդային նոր մոդելի ձևավորման հեռանկարը երրորդ աշխարհի երկրներից մեկում, այլ ձևավորելու առևտրահումքային նոր բազա, որի միջոցով հնարավորություն կտրվեր նաև դեպի արտասահման արտահանել սեփական տնտեսական արտադրանքը: Հետազոտողներից ոմանց կարծիքով այն ավելի շուտ աշխարհաքաղաքական զարգացումների սեփական օրակարգով պատասխանելու տարբերակ էր, որի նպատակը ոչ թե էքսպանսիոնիստական, այլ պաշտպանական/բուֆերային կարողությունների ընդլայնումն էր [**17,** էջ 606]:

Խորհրդային կողմից Աֆղանստանին տրամադրված միջոցները հիմնականում վարկեր էին, այլ ոչ թե դրամաշնորհային ծրագրեր, չնայած այն հանգամանքին, որ դրանց տոկոսադրույքը 2 կամ 3 տոկոս էր, իսկ մարման համար ժամկետները՝ մինչև երեսուն տարի [**4,** էջ 177]: Հետագայում աֆղանական կողմի տնտեսական և վճարունակության դժվարություններին համընթաց՝ տրամադրված վարկերի մարման տարբերակները հարմարեցվեցին Աֆղանստանի տնտեսական հնարավորություններին՝ շատ հաճախ փոխարինվելով հումքառեսուրսային միջոցների փոխարինմամբ: Միևնույն ժամանակ ձևավորված ֆինանսավարկային քաղաքականությունն իր հերթին ամրապնդում էր քաղաքական հարաբերությունները, ձևավորում միջկառավարական հանձնաժողովներ, կոմիտեներ և այլ օժանդակ կառույցները: Նմանօրինակ գործունեությունը ևս անուղղակիորեն նպաստում էր ազդեցության հաստատմանը ու ընտրանու շրջանում ձևավորում գործընկերային հոգեբանություն:

Խորհրդային ազդեցության և աֆղանական հակազդեցության առավել նկատելի ոլորտ էր կրթական և մշակութային քաղաքականության կիրարկումը: Կրթամշակութային քաղաքականության ձևաչափով ԽՍՀՄ-ը ձգտում էր ոչ միայն ամրապնդել քաղաքական ազդեցությունը, այլև ձևավորել սոցիալիստական արժեքների վրա հիմնված հիբրիդային հասարակական համակարգ, որը նման չէր լինելու խորհրդային այլ փորձառություններին, միևնույն ժամանակ միջոց էր դիտարկվելու խորհրդային քաղաքա-

կրթության արտահանման համար: Այս քաղաքականությունը դիտարկվում էր որպես ինստիտուցիոնալ փոխակերպման և աֆղանական հասարակության ներսում «նոր մարդու» ձևավորման առանցքային գործիք:

Ինչպես նախորդ ազդեցութենական փորձառությունների դեպքում էր, աֆղանական մոդելի ձևավորման հիմքում ևս կրթական ազդեցությունն ուներ առանցքային դերակատարում: Այն որոշ առումներով պետք է դառնար սոցիալիստական վերափոխման հիմքը: Նախ աֆղանական կրթական համակարգի վերակազմավորման և խորհրդային մոդելին համապատասխանեցնելուն ուղղված քայլերը պարունակում էին որոշակի մարտահրավերներ, ուստի խորհրդային կողմը դիտարկում էր միայն անուղղակի միջոցներով և ազդեցության կրթական ոլորտի համահարթեցման իրականացումը: Որոշակի պայմաններ ձևավորվեցին աշխարհիկ, կենտրոնացված կրթական համակարգի կայացման համար, որտեղ օտար լեզվի կարգավիճակով ուսանելի էր նաև ռուսերենը [**19**, էջեր 587-602; **20**, էջեր 120-139]: Ինչպես նկատում հետազոտողները՝ «*Քաբուլի կոմունիստական կառավարությունը կրթությունը համարում էր Աֆղանստանի տնտեսական և սոցիալական վերափոխման հաթանման կարևոր գործիք*» [**19**, էջ 592]:

Խորհրդային զորքերի Աֆղանստան մուտքից, խորհրդային վարչակարգի ձևավորումից հետո փոխակերպվեց նաև դպրոցական կրթության ծրագրային հատվածը, որտեղ արդեն տեղ գտան խորհրդային գաղափարախոսության տարրերը: Մինչ խորհրդային վարչակարգի հաստատումը և հաստատումից հետո խորհրդային կողմը հատուկ ուշադրություն էր դարձնում տեխնիկական ու մասնագիտական կրթությանը և այդ ուղղությամբ իրականացվեցին մի շարք ծրագրեր [**7**, էջեր 109-118]: Հետազոտողները համակարծիք են, որ Մոհամմադ Դաուդի վարչակարգից սկսած ԽՍՀՄ-ը զգալիորեն նպաստել է աֆղան ուսանողների ակադեմիական առաջխաղացմանը, փոխանակման ծրագրերի կազմակերպման, ինչպես նաև Քաբուլում կառուցել տարբեր ուսումնական հաստատությունների համար նոր ակադեմիական շենքեր [**3**, էջ 151]: Կրթական և գիտատեխնիկական համահարթեցման, գաղափարախոսական ազդեցության ապահովման միջոցով ԽՍՀՄ-ը ձգտում էր ձևավորել նոր կրթական էլիտա, որը կհանդիսանար Աֆղանստանում սոցիալիստական գաղափարախոսության հաստատման և նոր մոդելի պետության հենարանը: Այդ նպատակն էր արտահայտում նա 1981 թվականի դեկտեմբերի 18-ին ԱԴՀ Նախարարների խորհրդի կողմից հաստատված «Միջնակարգ և ընդհանուր կրթության» կանոնադրությունը, որտեղ որպես ապագայամետ նպատակներ առաջարկվում էր «կրթել երիտասարդությանը հեղափոխական և հայրենասիրական ոգով՝ ապահովելով ակտիվ և տեղեկացված մասնակցություն սոցիալական վերափոխումներին և այդ փոփոխությունների պաշտպանությանը, հավատարմություն Աֆղանստանի Դեմոկրատական կուսակցության սկզբունքներին և հայրենիքն ու հեղափոխության նվաճումները պաշտպանելու պատրաստակամություն» [**10**, էջեր 126-127]: Կրթական քաղաքականության իրացումը ոչ միայն նպատակ ուներ ապահովելու խորհրդային ազդեցությունը, այլև ամրապնդելու իշխող կուսակցության դիրքերը:

Կրթական ազդեցության օժանդակման միջոց էր հանդիսանում կրթական փոխանակման ծրագրերի իրականացումը, հատկապես աֆղան ուսանողների անվճար ուսուցման կազմակերպումը խորհրդային բուհերում [**9**], մասնագիտական վերապատրաստումները (ինժեներներ, բժիշկներ, ուսուցիչներ), ինչպես նաև խորհրդային մասնագետների ներգրավումը Աֆղանստանի տնտեսական, տեխնոլոգիական և կառավարչական ինստիտուտներում: «Ակադեմիական միգրացիայի» նպատակն էր Աֆղանստանի երիտասարդ մասնագետների միջավայրում ստեղծել մի շերտ, որը կունենար «խորհրդային աշխարհայացք» և անհատական մակարդակում կնպաստեր հաղորդակցական հնարավորությունների ձևավորմանը: Քաբուլի համալսարանն ու պոլիտեխնիկական ինստիտուտը, որը կառուցվել էր խորհրդային աջակցությամբ, դարձան խորհրդային գիտական մտքի և ազդեցության տարածման կենտրոնները, որտեղ դասավանդում էին հարյուրավոր խորհրդային կամ խորհրդային կրթություն ստացած դասախոսներ:

Պետք է նշել, որ աֆղանական հասարակության լայն շերտերի ինտեգրման տեսանկյունից թույլ ազդեցության ունեցավ խորհրդային մշակութային քաղաքականությունը: «Ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» ստալինյան հայտնի բանաձևը Մոսկվան փորձեց մոդելավորել և կիրառել աֆղանական բազմէթնիկ միջավայրում: Խորհրդային իշխանությունները խրախուսում էին փոքրամասնությունների լեզուների (ուզբեկերեն, թուրքմեներեն, բելուջերեն) կիրառումը [**10,** էջ 129]՝ նպատակ ունենալով թուլացնել գերիշխող փաշթունական ազդեցությունը և ստեղծել «սովետական տիպի» ինտերնացիոնալիզմ: Բացի էթնոլեզվական համահարթեցումից, տեղեկատվական, քարոզչական և մամուլի բոլոր հնարավոր միջոցներով խորհրդային իշխանությունները փորձում էր ամրապնդել ԱԺԴԿ-ի քաղաքական ազդեցությունը: Մամուլի զանգվածային միջոցներ հանդիսացող թերթերը, հեռուստատեսությունը ծառայում էին խորհրդա-

աֆղանական բարեկամության և եղբայրության, համատեղ նախագծերի լուսաբանման միջոց [**13**, էջեր 169-170]: Զանգվածային լրատվության միջոցների գործադրմամբ ընդգծվում էր ԽՍՀՄ-ի դերը՝ որպես Աֆղանստանի անկախությունը առաջինը ճանաչած, ամենամեծ տնտեսական և ֆինանսական ներկայություն ունեցող երկրի [**13**, էջեր 169-170]: Մշակութային համահարթեցման նպատակ ուներ նաև կանանց իրավունքների պաշտպանությունը (չադրայի հանում, աշխատանքային իրավունք), որը ներկայացվում էր որպես մշակութային առաջընթաց, սակայն գյուղական շրջաններում դա դիտվում էր որպես սրբապղծություն և միջամտություն ընտանեկան պատվին:

Եթե Աֆղանստանում խորհրդային տնտեսական, քաղաքական, ռազմանվտանգային ներկայությունը դիտարկվում էր որոշակի օրինաչափության և փոխշահավետության տիրույթում, ապա կրթամշակութային քաղաքականության մեջ դրսևորվեցին առաջին ակնհայտ ռիսկերն ու խնդիրները: Ի պատասխան աթեիստական քարոզչության՝ աֆղանական հասարակությունը համախմբվեց իսլամական արժեքների շուրջ: Կրթական բարեփոխումները դարձան մոջահեդների հիմնական թիրախներից մեկը. հազարավոր դպրոցներ այրվեցին, իսկ ուսուցիչները թիրախավորվեցին որպես «կոմունիստական գործակալներ»:

Աֆղանստանում իրականացված խորհրդային վերափոխումները չստացավ վերջնական տեսք, քանի որ դրանք չէին բխում հասարակության ներքին զարգացման տրամաբանությունից, իսկ նմանօրինակ արդյունքի չհանգելու համար խորհրդային կողմը պետք է իրականացներ բազմամյա գաղափարական և հասարակաշինական գործընթաց, որի արդյունքում հնարավոր կլիներ աֆղանական էլիտայի ներսում ձևավորել խորհրդահեն շերտ, որի շնորհիվ էլ իրականացվող գործընթացները կունենային հստակ ռազմավարություն և արդյունավետության ցուցիչներ:

Եզրակացություն

Խորհրդային արտաքին քաղաքականության՝ «սոցիալիզմի արտահանման» փորձառությունը Երրորդ աշխարհի երկրներում ունեցավ ինչպես ընդհանրություններ այնպես էլ տեղային առանձնահատկությունները: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ խորհրդային քաղաքականության հաջողությունը կամ ձախողումը պայմանավորված էր՝ տեղական հասարակությունների խորհրդային մոդելի ընկալման, էլիտաների ներգրավման և ներդրումային քաղաքական արդյունավետությունից:

«Աֆղանական սոցիալիզմի» իրականացման փորձառությունն ինքնատիպ չէր, սակայն առանձնանում էր մի շարք կարևոր հանգամանքներով, որոնք պայմանավորեցին խորհրդային նախագծի ձախողումը:

ԽՍՀՄ-ը 1920-ական թվականներից ձևավորեց արտաքին քաղաքականության հայեցակարգեր, որոնք չէին առանձնանում հստակ ռազմավարությամբ, այլ գործում էին օպերատիվ ձևաչափով: Այն չէր դիտարկում արտաքին քաղաքական ներկայության խորքային մոտեցումները՝ առանց ուսումնասիրելու արտաքին քաղաքական «թիրախների» ներքին զարգացման, հասարակաշինության առանձնահատկությունները ու տրամաբանությունը:

«Աֆղանական սոցիալիզմի» խորհրդային նախագիծը ձախողվեց նաև Մ. Մաննի իշխանության աղբյուրների մոդելի՝ գաղափարախոսական, քաղաքական, տնտեսական և ռազմական ուղղություններով, որոնց արդյունքում էլ հասարակության լայն շերտերն անարձագանք գտնվեցին խորհրդային քաղաքականության նկատմամբ:

Աֆղանական փորձառությունը ցույց է տալիս, որ արտաքին քաղաքական և ռազմական միջամտությունները չեն կարող հաջողել առանց տեղական մշակութային, հասարակական և քաղաքական համատեքստի խորը ըմբռնման: Այս մոտեցումն արդիական է նաև այսօր, ինչպես և կարող է հանդիսանալ հետազոտական գործիք՝ ուսումնասիրելու այլ ազդեցություններն ու դրանց արդյունավետությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **XX съезд Коммунистической партии Советского Союза**. 14-25 февраля 1956 г. Стенографический отчет. М.: Госполитиздат, 1956, Т. 1. – 640 с.
2. **Ленин, В. И**. Детская болезнь «левизны» в коммунизме. Полн. собр. соч.. М.: Издательство политической литературы, 1967, Т. 41.
3. **Махди, М**. Роль СССР в развитии системы образования Афганистана между 1933 и 1978 гг. // Общество: философия, история, культура. 2023. N 9. с. 149-153.
4. **Пойя, С**. Афганистан при премьер-министре Мухаммаде Даудхане (1953–1963): эпоха развития и конфронтации. – Москва: ИВ РАН, 2022. – 396 с.
5. Программа Коммунистической партии Советского Союза, http://museumreforms.ru/node/13891#ref-5 (15.08.2026)
6. **Тихонов, Ю. Н.** Пуштунские племена и Коминтерн (1919-1929), Коминтерн и Восток: к 100-летию Коминтерна (Коллективная монография) / Отв. ред. Н. Г. Романова, К. В. Орлова; Ин-т востоковедения РАН. – М.: ИВ РАН, 2021, с. 381-394.
7. **Цветкова, Н. А. Ширяев, Б. А**. Стадник И. Т. Политика США и СССР по отношению к Кабульскому университета в период" Холодной войны" // США и Канада: экономика, политика, культура. 2014. №. 6 (534), с. 109-118.

8. **Mann, M**. The Sources of Social Power: Volume 1, A History of Power from the Beginning to AD 1760, Cambridge University Press, 1986, – 543 p.
9. Afghanistan: Resisting Sovietization. https://www.cia.gov/readingroom/docs/CIA-RDP85T00314R000400020005-2.pdf (15.08.2026)
10. **Eslami, R., & Hasin, B. A**. Theology Education and Its Application in Afghanistan's Educational Policies (1973–2021): A Narrative Review // Journal of World Sociopolitical Studies, 2025, Vol. 9, N 1, pp. 117-152.
11. **McDermott, K.; Agnew, J**. *The Comintern: A History of International Communism from Lenin to Stalin*. London: Macmillan Press. 1996, – 336 p.
12. **Minkov, A., Smolynec, G**. Economic development in Afghanistan during the Soviet period, 1979-1989: Lessons learned from the Soviet experience in Afghanistan. 2007. N 1, pp. 1-26.
13. **Nabat, M. M**. Soviet Project of Nation-State-Building in Afghanistan. Vestnik of Saint Petersburg University. Asian and African Studies, 2022, Vol. 14, N 2, pp. 162–175. https://doi.org/10.21638/spbu13.2022.201
14. **Noorzoy, M. S**. Soviet economic interests and policies in Afghanistan //Afghanistan: The Great Game Revisited. Rev. ed. (New York: Freedom House). 1990, pp. 71-95.
15. **Oudenaren, J. V**. The Tradition of Change In Soviet Foreign Policy //Understanding Soviet Foreign Policy, Mc Nair Paper Number Seven, The Institute For National Strategic Studies, Washington DC, 1990, – 45 p.
16. **Poullada, L. B**. The Road to Crisis 1919-1980: American Failures, Afghan Errors and Soviet Successes. Afghanistan: The Great Game Revisited, New York: Freedom House, 1987, p. 37-69.
17. **Robinson, P. Dixon, J**. Soviet development theory and economic and technical assistance to Afghanistan, 1954–1991 //The Historian. 2010, Vol. 72. N. 3, pp. 599-623.
18. **Triska, Jan F**. A Model for Study of Soviet Foreign Policy. *The American Political Science Review*, 1958, Vol. 52, N. 1, pp. 64-83.
19. **Samady, S. R**. Modern education in Afghanistan. Prospects, 2001, Vol 31, N 4, pp. 587-602.
20. **Yazdani, H**. History of Formal Education and Influence of Politics in Afghanistan. *In Factis Pax: Journal of Peace Education and Social Justice*, 2020, Vol *14*, N 2, pp. 120-139.

Сдана / Հանձնվել է՝ 05.10.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 12.10.2026
Принята / Ընդունվել է՝ 19.10.2026